

Ու մինչ մօտ օրէն տաճարին հանդիսաւոր բացումը պիտի կատարուի՝ Վանահայրը կ'որոշէ եւ միջոցներ ձեռք կ'առնէ՝ զայն հիմնայատակ քակելու...

Ահա, տիկնայք եւ տեարք, *Հին աստուածներու* նիւթը՝ համառօտակի:

Կ'արժէ վայրկեան մը կանգ առնել՝ քննելու համար այն զանազան մեկնութիւնները, որոնք ի յայտ եկան Շանթի գործին մասին զանազաններու կողմէ:

Ոմանք պատմական գործ մը կը նկատեն զայն. աւելորդ է ըսել թէ այնպէս չէ. հոն ոչ պատմական շրջան, ոչ պատմական անձնաւորութիւններ կան. չիկայ նաեւ ատանկ շրջաններու յատուկ բարացուցան նկարագիր:

Կ'ըսուի թէ քրիստոնէութեան եւ հեթանոսութեան անհաշտ պայքարն է: Մեծապէս տարակուսելի է այս հետեւութիւնն ալ: Հեղինակը ինչո՞ւ հազար տարի մը հեռանալով այդ պայքարին սաստկագոյն եւ արհաւիրալի շրջանէն՝ գալու համար անանկ ատեն մը՝ երբ հեթանոսական ամէն բան մարած էր ու քրիստոնէութիւնը իր յաղթութիւնը կը դրօշէր հին կրօնին աւերակներուն վրայ:

Աւելի յուսալի լուծման մը պիտի հակէր այն մեկնութիւնը՝ որ կը պնդէ թէ *Հին աստուածները* վանական եւ աշխարհիկ կեանքին կոիւն է. ասիկա երեւութապէս ճիշտ է, եւ կարծիքն է անոնց՝ որոնք այս symbolique գործին կեղեւին հպած են միայն:

Տեարք եւ տիկնայք, եթէ թոյլ տրուի ինձ արտայայտուիլ՝ ես կովկասահայ քննադատ Արշ. Ղազարեանի հետ համաձայն եմ ըսելու թէ այս գործը *մտքին* եւ *սրտին* յաւերժական կոիւր կը խորհրդանշէ<sup>23</sup>, այսինքն *մտածման* եւ *զգացման*:

Ճիշտ է, մենաստանի մը մէջ տեղի կունենայ եղելութիւնը, եւ թէ այնտեղ գործողները կղերականներ են, բայց ամէն ինչ խորհրդանշան է հոն, խորհրդանշան՝ Վանահայրը, Աբեղան, Կոյրը, նորաշէն Եկեղեցին, Ծովը:

Վանահայրը անշահախնդիր վերլուծման եւ եսամերժ մտածման նուիրուած մարդկութիւնն է, կամ եւ որ նոյնն է,